ԾՆՈՂԱՑ ԵՒ ԱՇԱԿԵՐՏԱՑ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ՄԻԱԲԱՆԻՑ ԱՇԽԱՏՈՂԱՑ, ԵՒ ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ ՏՈՒՈՂԱՑ ԵՒ ԲՈԼՈՐ ԱՐԱՄԵԱՆՍ ՏՈՀՄԻ. ՀՏԷՐ ՅԻՍՈՒՍ ԵՒ ՀՏՈՒՆՍ ՍԻՐՈՂԱՑ. ԸՆԹԵՐՑՈՒ,ԲԴ ԱՍՏՈՒԱԾ ՈՂՈՐՄԻ ԱՍԱՅԷՔ ԱՄԷՆ։

Աստուածատուր Կաթուղիկոս Ս. Էջմիածնի իբրեւ լուաւ թէ հասեալ է Գրիգոր Պատրիարք յերուսաղէմ յԱթոռն իւր, և ձեռն արկեալ 'ի գործ շինութեան վանաց Ս. Յակոբայ, գրեաց առ նա թուղթ սիրոյ և յարգանաց, հարցանելով զողջունէ նորին եւ զթեթեւութենէ պարտուց Ս. Աթոռոյն. զի թէպէտեւ ուխտաւորք տարուցն այնորիկ 'ի դարձի իւրեանց 'ի հայրենիս, աւետաւորեալ էին նմա զբարեկարգ տնտեսութենէ Աթոռոյն, և զայլ ազգաշէն բարեգործութենէ նորին. այլ Աստուածատուր 'ի դիւրութիւն սրտի իւրոյ, խնդրէր գիր 'ի նմանէ, և ինքն յետ կարգաւորելոյ զգործս նուիրակացն Երուսաղէմի եւ անվնաս հասուցանելոյ զարդիւնս նոցին 'ի ձեռս Գրիգորի. յարէ 'ի վերջոյ. « զնուիրակն Գողթան դաւառի զՄխիթար վարդապետ՝ կարգեցաք Նուիրակ Կարնոյ, զի մի՛ գործն խափանեսցի, եթէ հաճոյ է քեզ՝ բարի՝ իսկ եթէ ոչ, զո՛ ոք կամիս, զայն առաքեա, զի գործ Ս. Տանդ յառաջեսցէ, և մերն յետոյ լիցի ». 1721 'ի 18 Հոկտեմբեր ամսոյ։

Ի սմին ամի ելեալ ուխտաւորաց 'ի Յոսպէկ քաղաքէ երթային յերուսաղէմ, և 'ի ճանապարհին յարձակեալ 'ի վերայ նոցա աւազակաց՝ կալան զնոսա եւ մերկացուցին. վիրաւորեցին զբազումս, և զոմանս սպանին իսկ. և այս եղեւ յանհոգութենէ Իշխանին Յոսպէկ քաղաքի, որ ըզՂաֆար կոչեցեալ տուրս նոցին էառ, և զպարտ ու պատշաճ պաշտպանութիւնն զլացաւ 'ի նոցանէ. 'ի վերայ այսր անակնկալ դիպուածոյ՝ միաբանեցան երեք ազգք յերուսաղէմ, և ետուն փոխադարձ գիր դաշանց եւ երաշխաւորութեան միմեանց, չքակտիլ 'ի միաբանութենէ իւրեանց. ապա առին Հեսոճէթ 'ի դատաւորէն և առաքեցին զայն 'ի Կոստանդինուպոլիս, բերել ոստիկան հրովարտակաւ. զի պաշտպանութեամբ նորին ուխտաւորք իւրաքանչիւր ազգաց՝ առանց վտանգի եւ վնասու եկեցեն